# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<< 18 >> 09 2014թ. N: 226-Ա ք.Գյումրի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18 -Ի ԹԻՎ 10 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 9-րդ կետի 10-րդ ենթակետի դրույթով՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 10 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի*
*2014թ. 18. 09 ի*
*N 226-Ա որոշման*

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N 10**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Գյումրի 18. 09. 2014 թ.

ԿԱՅԱՑԱԾ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18 -ԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Խ. ԽՆՁՐՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
Ա. ԱՆՏԻԿՅԱՆԻ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

Հանձնաժողովի նիստին մասնակցել է <<Մուշ-Արմեն>> և <<Տրանս Ակնթարթ>>, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչները:

Նիստին չի մասնակցել՝ Տ. Ղարիբյանը:

**<u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ</u>**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային թվով 2՝ Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ և Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկան նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Տրասն Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Հ. Գևորգյանի խնդրանքը, ընկերության կողմից սպասարկվող Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N07-002/ և Գյումրի-Մարալիկ և հետադարձ /N07-021/ միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող միկրոավտոբուսները համարժեք այլ միկրոավտոբուսներով փոխարինելու մասին:

**/Զեկ. Խ. Խնձրցյան/**

**<u>Լ Ս Ե Ց Ի Ն</u> - 1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային թվով 2՝ Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ և Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկան նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

**/Զեկ. Խ. Խնձրցյան/**

Զեկուցողը նշեց, որ 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային թվով 2՝ Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ և Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման

ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթը:

1) <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկման համար մրցույթի մասնակցության հայտով նշված միկրոավտոբուսները սահմանված ժամկետում ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրեց միկրոավտոբուսների գնահատման մրցութային թերթիկները՝ գնահատված:

Բացվեց հայտատուի կողմից երթուղիների սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գնի փակ ծրարը:

2) <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Ձորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկման համար մրցույթի մասնակցության հայտով նշված միկրոավտոբուսները սահմանված ժամկետում ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրեց միկրոավտոբուսների գնահատման մրցութային թերթիկները՝ գնահատված:

Բացվեց հայտատուի կողմից երթուղիների սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գնի փակ ծրարը:

**Հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը առաջարկեց՝**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 49-րդ կետի պահանջով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացած ներմարզային թվով 2՝ Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ և Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Ձորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկան մրցույթում հաղթող ճանաչել.

1) Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկան մրցույթում հաղթող ճանաչել <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Առաջարկությունն ընդունվել է՝ միաձայն :

2) Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Ձորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկան մրցույթում հաղթող ճանաչել <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Առաջարկությունն ընդունվել է՝ միաձայն:

**Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը Ո Ր Ո Շ Ե Ց**

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության 2014 թվականի մայիսի 31-ին կայացած թվով 2՝ Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ և Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Ձորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղիների սպասարկան մրցույթում հաղթող ճանաչել.

ա) Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկան մրցույթում հաղթող ճանաչել <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը երթուղիները հետևյալ միկրոավտոբուսներով սպասարկելու համար:

Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ միկրոավտոբուսային

| Կազմակերպության անվանումը | Մրցույթում երթուղին շահել է՝ | | | | | | Փոխադրման գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ավտոմեքենայի տիպը | վարորդի անուն ազգանունը | ավտոմեքենայի | | միջին գումարային միավորները | ընդհանուր միավորները | |
| | | | մակնիշը | պետհամար անիշը | | | |
| << Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն | միկրոավտոբուս | Պողոսյան Գևորգ | ԳԱԶ – 322132 | 403 OP 61 | 509.0 /72.71/ | 499.5 /71.36/ | Գյումրի-Մարմաշեն - 150դրամ |
| | միկրոավտոբուս | Տաշչյան Արմեն | ԳԱԶ – 322132 | 34 ST 059 | 490.0 /70.0/ | | |

1) Հաշվի առնելով, որ << Մուշ Արմեն >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկելու համար մրցույթի գնահատման արդյունքում միկրոավտոբուսները ստացել են 70-ից ավել ընդհանուր միավոր և մրցույթին ներկայացված միկրոավտոբուսներից մեկն հանդիսանում է <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը, ուստի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետի 1-ին ենթակետի Գյումրի-Մարմաշեն և հետադարձ /N 07-010/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի՝ 18.09.2014-թ-ից մինչև 18.09.2017թ:

բ) Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկան մրցույթում հաղթող ճանաչել <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը երթուղին հետևյալ միկրոավտոբուսներով սպասարկելու համար:

Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/միկրոավտոբուսային

| Կազմակերպության անվանումը | Մրցույթում երթուղին շահել է՝ | | | | | | Փոխադրման գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ավտոմեքենայի տիպը | վարորդի անուն ազգանունը | ավտոմեքենայի | | միջին գումարային միավորները | ընդհանուր միավորները | |
| | | | մակնիշը | պետհամար անիշը | | | |
| <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն | միկրոավտոբուս | Եղիազարյան Համլետ | ԳԱԶ – 322132 | 104 LS 62 | 499 /71.3/ | 494.5 /70.64/ | Գյումրի-Ամասիա -400դրամ,<br>Ամասիա –Բերդաշեն 300դրամ<br>Գյումրի-Բերդաշեն 700դրամ,<br>Բերդաշեն-Զորակերտ100դրամ<br>Գյումրի-Զորակերտ 800դրամ<br>Զորակերտ-Ծաղկուտ 50դրամ<br>Գյումրի-Ծաղկուտ-850դրամ<br>Ծաղկուտ-Գառնառիճ 50դրամ<br>Գյումրի-Գառնառիճ 900դրամ<br>Գառնառիճ-Շաղիկ100դրամ<br>Գյումրի-Շաղիկ 1000դրամ |
| | միկրոավտոբուս | Տաշչյան Արմեն | ԳԱԶ – 322132 | 34 ST 059 | 490 /70.0/ | | |

1) Հաշվի առնելով, որ <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկելու համար մրցույթի գնահատման արդյունքում միկրոավտոբուսները ստացել են 70-ից ավել ընդհանուր միավոր և մրցույթին ներկայացված երկու միկրոավտոբուսներից մեկ հանդիսանում են <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը, ուստի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի կարգի 54-րդ կետի 1-ին ենթակետի Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Զորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ /N 07-061/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի՝ 18.09.2014-թ-ից մինչև 18.09.2017 թ:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - **2.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Հ. Գևորգյանի խնդրանքը, ընկերության կողմից սպասարկվող << Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N07-002/>> և <<Գյումրի-Մարալիկ և հետադարձ /N07-021>> միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող միկրոավտոբուսները համարժեք այլ միկրոավտոբուսներով փոխարինելու մասին:

**/Զեկ. Խ. Խնձրցյան/**

Զեկուցողը նշեց, որ 2014 թվականի հուլիսի 16-ին << Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N07-002/>> և <<Գյումրի-Մարալիկ և հետադարձ /N07-021>> միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող

միկրոավտոբուսները <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ներկայացրեց միկրոավտոբուսների գնահատման մրցութային թերթիկները՝ գնահատված:

**Հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը առաջարկեց՝**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 69-րդ, 70-րդ և 71-րդ կետերի պահանջով թույլատրել <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, իր կողմից սպասարկվող Գյումրի-Մարալիկ և հետադարձ /N07-021 միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ 32213 մակնիշի 022 SO 45 /0902L/ միկրոավտոբուսը /գնահատականը՝ 70.32 միավոր/ փոխարինելու համարժեք ԳԱԶ 322132-220 մակնիշի 15 SS 089 հաշվառման համարանիշի միկրոավտոբուսով /գնահատականը՝ 73.43 միավոր/ և Գյումրի-Գետք-Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N07-002/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ 322132 մակնիշի 35 TL 375 /0858L/ միկրոավտոբուսը /գնահատականը՝ 72.93 միավոր/ փոխարինելու համարժեք ԳԱԶ 322132 մակնիշի 34 AT 305 հաշվառման համարանիշի միկրոավտոբուսով /գնահատականը՝ 76.3 միավոր/:

Առաջարկությունն ընդունվել է՝ միաձայն:

**Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը Ո Ր Ո Շ Ե Ց**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 69-րդ, 70-րդ և 71-րդ կետերի պահանջով հանձնաժողովը որոշեց թույլատրել <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, իր կողմից սպասարկվող Գյումրի-Մարալիկ և հետադարձ /N07-021 միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ 32213 մակնիշի 022 SO 45 /0902L/ միկրոավտոբուսը փոխարինելու համարժեք ԳԱԶ 322132-220 մակնիշի 15 SS 089 հաշվառման համարանիշի միկրոավտոբուսով և Գյումրի-Գետք-Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N07-002/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ 322132 մակնիշի 35 TL 375 /0858L/ միկրոավտոբուսը փոխարինելու համարժեք ԳԱԶ 322132 մակնիշի 34 AT 305 հաշվառման համարանիշի միկրոավտոբուսով:

3. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 10-րդ ենթակետի, սույն արձանագրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պետրոսյան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Վ. Հարությունյան

անդամներ՝ Ա. Մարգարյան

Ա. Անտիկյան

Ա. Մուրադյան

քարտուղար՝ Խ.Խնձրցյան